

ԸՆԴԴԵՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

h/h	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղումը
1	2	3	4	5	6	7	8
1	<<Ընդդեմ գենդերային բռնության>> խորագրով հեռուստատեսային քննարկումների կազմակերպում	Գենդերային բռնության դեմ պայքարի ուղղությունների մշակում, տեսակետների վերլուծություն, պայքար գենդերային բռնության դեմ	Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին	Մարզի ՋԼՄ-ներ	Երկրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	
2	<<Արվեստի դերը գենդերային բռնության դեմ պայքարի գործում. գեղեցիկը և բռնությունը>> թեմայով կլոր սեղան-բանավեճի կազմակերպում մշակութային հաստատությունների աշխատողների համար	Գենդերային բռնության հիմնախնդրի վերլուծություն	Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժին	Հասարակական կազմակերպություններ, արվեստագետներ	Երկրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	
3	Մարզխորհրդի նիստ <<Գենդերային անհավասարությունը և բռնությունը որպես ներընտանեկան կոնֆլիկտների և ամուսնալուծությունների պատճառ>>	Ներընտանեկան բռնության հիմնահարցի բարձրացում և ներընտանեկան կոնֆլիկտների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ	Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին	ՏԻՄ-եր, մարզում գործող գենդերային մշտական հանձնաժողով	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	
4	<<Ընդդեմ գենդերային բռնության 16 օրյակի>> քարոզարշավի շրջանակներում կլոր սեղանների կազմակերպում՝ կանանց և երեխաների նկատմամբ բռնության և թրաֆիքինգի հարցերի քննարկում համայնքների ղեկավարների մասնակցությամբ	Գենդերային բռնության հիմնախնդրի իրազեկման բարձրացում, թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվության հաղորդում և կանխարգելման աշխատանքների իրականացում համայնքներում	Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին	ՏԻՄ, ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	

5	<p>Ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի ծրագրով մարզում նախատեսված միջոցառումների լուսաբանում, տարվա ընթացքում հիշյալ թեմաների շրջանակներում կազմակերպված լուսաբանման աշխատանքների ամփոփում և վերլուծություն</p>	<p>Ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի ծրագրի համակողմանի լուսաբանում, լրատվության բնագավառում այդ ուղղությամբ կատարված աշխատանքների դիտարկում և վերլուծություն, հեռանկարային ծրագրերի նախանշում</p>	<p>Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին</p>	<p>Մարզի ՋԼՄ-ներ</p>	<p>Չորրորդ եռամսյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	
6	<p>Գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքների հաղորդման և գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և իրականացում մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների և մանկավարժների համար</p>	<p>Գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքների յուրացում և փոխանցում հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտներին, ուսուցողական միջոցառումների կազմակերպում</p>	<p>Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժին</p>	<p>Հանրակրթական դպրոցներ</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	